

ՀՈԳԵԼԵԶՎԱՔԱՆԱԿԱՆ ՄԻ ՓՈՐՁԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

ՀՅՍՀ ԳԱ քոլափից-անդամ

Լեզուն, հասարակական հաղորդակցման միջոց լինելու հետ մեկտեղ, նաև սուբյեկտիվ ունակություն է: Այդ ունակությունն ունի երկու կողմ՝ բնախոսական և հոգեբանական: Բնախոսականը մարդու մտածելու և խոսելու կարողությունն է կամ հատկությունը: Ձևավորված լինելով մարդու առաջացման էվոլյուցիոն զարգացման դործընթացում, այդ կարողությունը դարձել է մարդու բնախոսական (ֆիզիոլոգիական) յուրահատուկ կարողություն և հանդես է գալիս որպես մարդկային ժառանգական, բնածին կարողություն: Ամեն մի մարդկային էակ բնականից արդեն օժտված է մտածելու և խոսելու կարողությամբ: Որպես հոգեբանական երևույթ, լեզուն կապված է այդ ներուճակ կարողության դործադրության՝ այս կամ այն լեզուն յուրացնելու, իր գիտակցության մեջ տվյալ լեզվական համակարգը առավել կամ նվազ լրիվությամբ ամբարելու հետ:

Ամեն մարդ մանկական հասակում սովորում է որևէ լեզու, որ նրա համար դառնում է մայրենի լեզու: Այս սովորելը հասարակական հաղորդակցման մեջ օբյեկտիվորեն գործադրվող համակարգի յուրացումն է: Ծրեխան իր շրջապատից անընդհատ լսում է բառեր, բառերի կապակցություններ, առավել կամ պակաս երկարությամբ նախադասություններ՝ որոշակի արտասանական-ձայնային հատկանիշներով և աստիճանաբար, անընդհատորեն կրկնվող ընկալումների հետևանքով ու իր մտավոր կարողությունների զարգացմանը զուգընթաց, սկսում է ըմբռնել լսած բառերը, ապա՝ դրանց կապակցությունները և այլն: Դրա հետ միասին, երեխան սովորում է վերարտադրել իր լսածը, նախ՝ թոթովանքներով, ապա՝ կրկնվող «վարժությունների» հետևանքով՝ հնչյունների ու դրանց կապակցությունների արտասանության հմտությամբ տիրապետելով: Այսպիսով, լեզվի յուրացման գործընթացում յուրաքանչյուր սուբյեկտ յուրացնում, իր գիտակցության մեջ ամբարում, իր ներքին սեփականությունն է դարձնում տվյալ լեզվական համակարգն իր ողջ տարբերով ու կառուցվածքով: Այն պահից, երբ լեզվի, որպես օբյեկտիվ ռեալության, համակարգը յուրացվել է, նա դառնում է արդեն սուբյեկտի ներքին հարստությունը, գանձը, նրա սուբյեկտիվ համակարգը: Որպեսզի ունակվությունն երկդիմի (բնախոսական ու հոգեբանական առումներով) տերմինը շփոթություն չըստեղծի, հոգեբանական երևույթի համար նախընտրում ենք ներուճակություն տերմինը: Դառնալով սուբյեկտի համակարգ և վերածվելով խորհող ու խոսող անհատի ներուճակությունը, լեզուն հենց իր սուբյեկտիվացումով էլ ոչ այլ ինչ է, և թե ոչ հասարակայնորեն ընդհանուրի ու օբյեկտիվի արտացոլումը սուբյեկտի մեջ: Ծվ որովհետև մեզ համար տվյալ դեպքում լեզվի, որպես ներուճակության, հենց այս կողմն է կարևոր, մենք չենք զբաղվի լեզվի ու խոսքի, հաղորդակցման մեջ հասարակականի ու անհատականի միասնության ու դրանց տարբերակումների խնդրով:

Քանի որ սուբյեկտիվ համակարգը արտացոլումը, յուրացումը, սեփականումն է հասարակայնորեն ընդհանուրի, ապա սրանից ինքնին բխում է այն, որ խոսող անհատի մեջ բառերը, դրանց իմաստները, քերականական կարգերը, դրանց արտահայտման միջոցները և այլն, նույնպես հասարակայնորեն ընդհանուր ու միասնական են և անհատական առանձնահատկությունները չեն խախտում այդ ընդհանրությունը: Լեզուն, այսպիսով, խոսող անհատի մեջ դառնալով ներունակություն՝ հաղորդակցման գործընթացում աստիճանաբար ստանում է յուրահատուկ ինքնավարություն ու մեքենականություն: Լեզվական համակարգը վերածվում է սերող մոդելների համակարգի և խոսքի մեջ այնպիսի մեքենականություն մեր կատարվում խոսքի սերումը, որ ամեն մի հաղորդված խոսք, կարծես, հենց սկզբից ի վեր, պատրաստի վիճակում կար արդորված խոսք, կարծես, հենց սկզբից ի վեր, պատրաստի վիճակում կար արդեն խոսողի գիտակցության մեջ: Այս իրողությունը, որ թե՛ լեզվաբանության և թե՛ հոգեբանության մեջ ընդհանուր է, հիմք է հանդիսանում լեզվական որոշ երևույթների ուսումնասիրության համար: Այսպես, քանի որ մեր ներունակ համակարգն արտացոլում է օբյեկտիվ համակարգը, ապա՝ մենք կարող ենք որոշ փորձերի միջոցով պարզաբանել այնպիսի երևույթներ, որոնք լեզվաբանական հետազոտությամբ լուսաբանելու համար հսկայական ջանքեր են պահանջում: Այսպես, օրինակ, որպեսզի իմանանք զարման բառի կապակցելիությունն այլ բառերի հետ, պետք է կարդանք մեր ամբողջ գրականությունը, և, հանելով այդ բառի բոլոր գործածությունները՝ պարզենք, թե ինչ իրական կապակցություններ կան: Բայց մենք կարող ենք համեմատաբար շատ քիչ աշխատատար փորձով էլ այդ բանը պարզել հետևյալ եղանակով. տվյալ լեզվով խոսողների որոշ զանգվածի (որոշ քանակով մարդկանց) առանձին-առանձին հանձնարարել, ասենք, զարման բառով կազմել նախադասություններ: Բնականաբար, այս դեպքում մեր ստացած արդյունքը սահմանափակ կլինի, որովհետև չեն արտացոլվի այն բոլոր կապակցությունները, որոնք հանդիպում են բանաստեղծական խոսքի մեջ (փոխաբերություններ, պատկերներ, բառախաղեր և այլն), բայց առօրյա սովորական կապակցությունների համար հենց այդ կարգի գործածությունները պետք է հանել, որովհետև դրանք վերաբերում են լեզվի, որպես արտահայտչամիջոցի, ոլորտին: Այս կարգի փորձեր, զանազան նպատակներով, վերջին տարիներում շատ են կատարվել, և դրանց նշանակությունը լեզվի համակողմանի ուսումնասիրության համար ակնհայտ է: Անշուշտ, այդ փորձերը պետք է կատարվեն որոշակի մեթոդիկայով ու մեթոդներով, հակառակ պարագայում դրանց գիտական արժեքը եթե ոչ սխալ, գոնե կասկածելի կլինի: Օրինակ, մեր բերած զարման բառի համար, առանց փորձի էլ կարող ենք ասել, թե քաղաքային միջավայրում առավել սովորական կապակցելի բառերից են ծաղիկ, ծաղկել, գալ, պայծառ և այլն, բայց գուղական միջավայրում դրանց կավելանան վառել (հերկել), ցանել, այգեփուր և բազմաթիվ այլ բառեր, որոնք նույնիսկ կարող են ավելի հաճախակի լինել, քան նախորդ շարքի որոշ բառեր:

Լեզվական ներունակ համակարգի տարրերի այս կապը, բնականաբար, պայմանավորված է հենց օբյեկտիվ իրականության տարրերի կապով: Բայց մեզ այժմ այդ պայմանավորվածությունը և հարաբերակցությունը չի հետաքրքրում: Վերը բերած մեր օրինակը վերաբերում է բառիմաստների (հետևաբար՝ նաև բառերի) զուգորդական (ասոցիատիվ) կապին: Մեր այս հաղորդման նյութը, սակայն, բոլորովին էլ այդ չէ. մենք այդ օրինակը բերեցինք

Հոգեկեղծարանական հետազոտությունների որոշ բնագավառի մասին մոտավոր դադարափար տալու նպատակով միայն: Այդ օրինակից ելնելով, հեշտ է պատկերացնել, որ ոչ միայն բառերի կապակցելիությունը, նրանց զուգորդական կապերն ու հարաբերակցությունն են մշակվում սուբյեկտի մեջ՝ լեզվական համակարգը յուրացնելիս, այլև, որ առավել կարևոր է, քերականական ձևերի, դրանց բաղադրիչների հարաբերակցության, խոսքային կիրառության, քերականական կարգերի արտահայտության պլանի ու բովանդակության պլանի միավորների միասնության և այլնի վերացարկված և ընդհանրացված կապավորները:

Մարդկային մտածողության վերացարկող, ընդհանրացնող, դասակարգող ու տարբերակող հատկությունը հնարավորություն է տալիս սուբյեկտին իր մեջ կրելու ոչ միայն իր ստացած լեզվական համակարգի տարրերը, այլև այդ համակարգն իր վերացարկված ընդհանրական մոդելներով, իբրև սերող համակարգ: Ինքնին հասկանալի է, որ այս իրողությունը ենթադրում է լեզվի մեջ օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթների ու դրանց գործածությունների ընդհանուր ու վերացարկված արտացոլումը, և եթե մենք խոսում ենք լեզվական այս կամ այն իրակության գոյության մասին՝ հիմնվելով իրական, օբյեկտիվացված լեզվի (իրական խոսքերի շղթայի) վերլուծության վրա, ապա դա նշանակում է, թե այդ իրակությունը, որպես ներուձակ լեզվական համակարգի տարր, գոյություն ունի նաև լեզվական հանրության անդամների գիտակցության մեջ: Եվ ոչ միայն այդ իրակությունը, այլև դրա գործածության բոլոր հնարավոր (համակարգի համար կարելի) պայմանների ու կառույցների գիտակցությունը: Այս հանգամանքը թույլ է տալիս ընդունելու, որ ամեն մի քերականական ձև թելադրում է որոշակի կառույց, ինչպես որ ամեն մի բառ ենթադրում է որոշակի բառերի կապակցելիություն: Այսպես. եթե տրված է գրում է բայաձևը, ապա, բնականաբար, դա կարող է թելադրել X գրում է Y ընդհանուր կառուցվածքը, որը կարող է իրացվել այդ կառուցվածքի զանազան տարբերակներով (X գրում է Y, X է գրում Y, X Y է գրում և այլն): հետևաբար, ստանալով գրում է բառն իբրև նախադասության կառուցող, խոսողին կամ գրողին մնում է «լցնել» այդ X և Y «բաց» տեղերը. նա կարող է թվարկել բազմաթիվ, նույնիսկ անսահմանափակ թվով իրական նախադասություններ, որոնց մեջ կփոխվեն X և Y միավորների կոնկրետ իրացումները, ասենք՝ X-ի «բաց» տեղը կարող է լրացվել այն բոլոր բառերով, որոնք կապակցելի են «գրում է»-ի հետ (օրինակ՝ նա, մարդ, տղա, աշակերտ, ուսուցիչ, դիրեկտոր, բանաստեղծ, քարտուղար, Տիգրան, Արսեն, Նազելի, Անահիտ և այլն), նույնպես և՛ Y-ի «բաց» տեղը: Սակայն դրանք չեն փոխում կառուցվածքը: Կառուցվածքի տեսակետից այդ անվերջ բազմություն կազմող առանձին նախադասությունները կդառնան սահմանափակ. ըստ որում, հնարավոր նվազագույնը, կլինի հենց միակազմ գրում է նախադասությունը, ապա՝ երկանդամ X (մարդը, աշակերտը, բանաստեղծը և այլն) գրում է, ապա՝ եռանդամ X (նա, մարդը, աշակերտը և այլն) գրում է Y (դաս, նամակ, հողված, վեպ և այլն), իր հնարավոր տարբերակներով, այնուհետև՝ այդ երեք անդամների զանազան լրացումներով, հետո բարդ նախադասություններով և այլն: Այս կառուցվածքները, որքան էլ բազմազան, այնուամենայնիվ փակ դաս են կազմում:

Մենք իբրև օրինակ բերեցինք դիմավոր բայածև, և դա կարող է թերևս այն ենթադրությանը հանգեցնել, թե, քանի որ դիմավոր բայածևն ինչնին կարող է կազմել նախադասություն, ապա բոլոր հնարավոր նախադասությունների սերումը պայմանավորված է հենց բայի առանձնահատկությամբ (իր դիմավոր ձևի մեջ նշում է ենթակայի դեմքը, իսկ դրանով էլ՝ թելադրում հնարավոր ենթական)։ Վերցնենք դասից բառաձևը, և այս դեպքում էլ գոյականի որոշակի հոլովածեով թելադրենք նաև որոշակի կառույցներ, ինչպես՝ Աշակերտը ուշացավ դասից, Աշակերտը դասից հետո տուն գնաց, Ուսմասվարը զոհ էր լսած դասից և այլն։ Որքան էլ անսահման լինեն առանձին իրական նախադասությունները, դրանց կառուցվածքը միանգամայն սահմանափակ է, որովհետև սահմանափակ են նաև բացառական հոլովի կառույցները։

Այս դատողությամբ առաջնորդվելով՝ մենք առանձնապես նորություն ասած շենք լինի, եթե հզրակացնենք, որ ամեն մի հոլով իր ձևով և իմաստով (ինչպես և՛ բոլոր մյուս քերականական կարգերի անդամներից յուրաքանչյուրը), գոյություն ունի խոսողի գիտակցության մեջ որպես տվյալ հարացույցի անդամ՝ վերացարկված ձևով (իբրև համակարգի տարր)։ Քանի որ այսպես է, ապա մենք կարող ենք մեր հոլովական համակարգի մասին փորձարարական եղանակով որոշ տվյալներ ստանալ ու որոշակի հզրակացությունների հանգել։ Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է հոլովների քանակի հարցը։ Հայտնի է, որ մենք արդի հայերենի հոլովական համակարգում ընդունում ենք վեց հոլովի գոյություն։ դա նշանակում է, հոլովի քերականական կարգը իրացվում կամ դրսևորվում է վեցանգամ համակարգով։ Հասկանալի է, որ այս մոտեցումով ուղղական և հայցական հոլովները նույնացնում ենք, իսկ սեռականը և տրականը դիտում որպես համակարգի ինքնուրույն անդամներ, այսինքն՝ առանձին հոլովներ։

Սլենելով վերը շարադրված այն սկզբունքից, որ ամեն մի հոլով իր ձևով և իմաստով գոյություն ունի սուբյեկտիվ համակարգում (իբրև օբյեկտիվի արտացոլում), մենք գտնում ենք, որ արդի արևելահայերենով խոսողների գիտակցության մեջ այդ երկու հոլովները տարբերակված են։ Այս իրողությունը օբյեկտիվորեն հաստատելու համար հնարավոր փորձերից մեկը (եթե ոչ՝ միակը) վերը հիշած մեր միջոցն է։ Քանի որ, ասենք, բացառականը թելադրում է որոշակի կառուցվածք (հոլովի ձևը նախորոշում է նախադասության որոշակի կառուցվածք՝ այդ ձևի կիրառության համար), ապա՝ սեռական ու տրական հոլովներն էլ, հենց իրենց ձևով, պետք է թելադրեն որոշակի կառուցվածք, որոնց մեջ դրանցից յուրաքանչյուրը կարող է հանդես դալ։ Որպեսզի այս փորձը կատարենք, մենք որոշ սկզբունքով պետք է պարզենք, թե ո՞րն է սեռականի ձևը և ո՞րը տրականի։ Ամեն կասկածից վեր է, որ սեռականի ու տրականի նույնական ձևերից մեկը, եթե ունի հոգ, ապա տրական է և միայն տրական։ Ուրեմն՝ սեղանին, մարդուն, ամսվան, դռանը, այգուն և նման որոշյալ ձևերը տրական են, ինչ վերաբերում է անորոշի ձևին, ասենք, սեռական՝ սեղանի, տրական՝ սեղանի, ապա այստեղ խնդիրը բարդանում է։ Սակայն այս բարդությունն էլ լուծվում է որոշակի դիտական սկզբունքների շնորհիվ։ Ինչպես մենք ցույց ենք տվել մեր «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ, այդ ձևերը ունեն թույլ և ուժեղ դիրքեր։ ուժեղ դիրքերում նրանք տարբերակվում են կապակցությամբ, թույլ դիրքերում՝ շեղոքանում (օրինակ՝ կապերի մեծ մասի հետ)։ Բայց, քանի որ

չկորացման դիրքում հանդես է գալիս մի ավելի ընդհանուր միավոր՝ գեո-հոլովածքը, ապա մենք իրավունք ունենք երկու ձևերը (սեռ. սեղանի, տր. սեղանի) դիտելու որպես գեոհոլովածք։ Նույն աշխատության մեջ, հանգամանորեն խոսելով հոլովների, մասնավորապես՝ սեռականի ու տրականի, չեզոքացման և այդ դիրքում հանդես եկող գեոհոլովածքի մասին, մենք լեզվական տվյալների քննությամբ այն եզրակացությանն ենք հանգել, որ դեոհոլովածքի գերում հանդես է գալիս սեռականի հոլովածքը. սա նշանակում է, թե մենք, օրինակ, սեղանի հոլովածքը համարում ենք սեռականի հոլովածք, որ ուժեղ դիրքերում (լրացուցիչ լեզվական միջոցներով) կարող է հանդես գալ նաև իրեն արական։ Այսպիսով, ուր որ ուժեղ դիրք չկա, այսինքն՝ ուր որ կադակցությունը հնարավորություն չի տալիս որոշելու տվյալ ձևն իբրև տրական, մենք կարող ենք այդ ձևը նույնացնել սեռականի հետ։ Այսպիսի բնութագրությունը թելադրում է այն համոզմունքը, որ խոսքից դուրս սեղանի, օտոի և նման (առանց հոդի) ձևերը պետք է գիտակցվեն որպես սեռական։ Սրանից էլ բխում է որոշակի հետևություն. եթե իսկապես սեռական և տրական հոլովները տարբերակվում են մեր գիտակցության մեջ՝ որպես սուբյեկտիվ համակարգի տարրեր, ըստ որում անորոշի ձևը սեռական է և սեռականի ու տրականի դերհոլովածք, ապա՝ սեղանի, մառդու և նման ձևերով նախադասություններ կամ բառակապակցություններ կազմելու հանձնարարություն տալով՝ մենք պետք է ստանանք կամ հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն, կամ չեզոքացման դիրքով կառուցվածք, և կամ այնպիսի կապակցություններ, որոնց մեջ ինչ-որ այլ լեզվական միջոցով ստեղծվում է ուժեղ դիրք՝ տրականը տարբերակելու համար։ Այս համոզմունքով առաջնորդվելով՝ մենք կազմեցինք տասը բառից բաղկացած մի ցուցակ, որի մի սյունակում բերում ենք սեռականի և արականի անորոշ ձևը, մյուսում՝ տրականի որոշյալ ձևը։ Ահա այդ ցուցակը.

Աշակերտի

Քաղաքի

Կատվի

Օրվա

Այգու

Շահենի

Գոհարի

Ուրախության

Լսարանի

Որդու

Աշակերտին

Քաղաքին

Կատվին

Օրվան

Այդում

Շահենին

Գոհարին

Ուրախությանը

Լսարանին

Որդուն

Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժնի 4-րդ կուրսում այս ցանկը դրելով գրատախտակի վրա՝ հանձնարարեցինք ուսանողներին դրել մեկական նախադասություն կամ բառակապակցություն այդ տասը բառերի յուրաքանչյուր ձևի գործածությամբ։ Բացատրելով, թե ինչ պետք է կատարեն, մենք ձգտել ենք այն բանին, որպեսզի որևէ ձևով չկաշկանդենք ուսանողներին և, մասնավորապես, մադրենք այս կամ այն կառուցվածքը գերադասելուն։ Դրա համար նախ զգուշացրել ենք, որ այդ աշխատանքը որևէ չափով չի կապվում ուսանողների ուղղագրական կամ քերականական գիտելիքների ստուգման հետ, և, որպեսզի գրանում լիովին համոզված լինեն, հանձնարարել ենք անուն-ազ-

զանուն չգրել: Այնուհետև, մեկ օրինակով ցույց ենք տվել, թե ինչ պետք է անեն, դրա համար վերցնելով ուսանող բառը, որ մեր ցանկում չկա, և կազմելով «Ծա մոտեցա մի ուսանողի» նախադասությունը: Ինչպես տեսնում ենք, այս օրինակը ավելի շատ հակասում է մեր նպատակադրմանը, որովհետև, եթե ուսանողները հետևեին դրան, ապա անորոշի բոլոր ձևերը պետք է գործածեին իբրև տրական: Սակայն մենք վստահ էինք, որ սեռականի ձևը թելադրում է անվանական կապակցություն, և արդյունքը արդարացրեց մեր այդ համոզմունքը:

Աշխատանքը կատարել են 61 ուսանողներ. կազմված նախադասությունների ընդհանուր թիվն է 1220, որից 610-ը՝ անորոշով, 610-ը՝ որոշյալով: Ցույց տալու համար, թե ինչպես են կատարել մեր հանձնարարությունը, բերենք միայն մեկ օրինակ:

Աշակերտի գիրքը դրված է սեղանին: Աշակերտին հուզում են մի քանի հարցեր:

Բաբելամի ժպիտը խրախուսեց նրան: Նա այլևս չպետք է տեսներ իր սիրելի բաբելամին:

Մառի տերևը պոկվեց և ընկավ գետնին: Մառին հենվելով մի քանի բուսի, նա նորից վերագտավ իրեն:

Այգու դռները հյուրընկալորեն բացվեցին անծանոթի առջև: Նա դանդաղորեն մոտեցավ այգուն:

Նախորդ ամսվա պլանները հազիվ կատարեց: Նա անհամբեր սպասում էր մարտ ամսվան:

Շանենի քույրը հիանալի մարդ է: Այլևս Շանենին չանհանգստացնեք այդ հարցով:

Ընկերոջ խորհրդին նա երբեք ականջ չէր գնում: Նա մոտեցավ ընկերոջը ինչ-որ բան հաղորդելու:

Կառվի ձագերը արևկող էին անում բակում: Հանկարծ կառվին հասան ինչ-որ տարօրինակ ձայներ:

Լսաբանի աղմուկը միանգամից լռեց: Դասախոսը դիմեց լսաբանին:

Ուրախությամբ ձիչեր դուրս թռան նրա բերանից: Նրա ուրախությանը չափ ու սահման չկար:

Հաշվելով բոլոր գործողությունները և ամփոփելով դրանք, ստացել ենք հետևյալ պատկերը: Որոշյալի ձևով կազմված 610 նախադասություններից միայն երեքում տրականը գործածվել է սեռականի դերով (տարբեր ուսանողների կողմից): Այդ երեքից մեկը արևմտահայ ուսանողի կազմածն է, ինչպես ցույց է տալիս նախադասությունը (Քաղաքին մեջ կռիվ վերթավ): արևմտահայերենում սեռական-տրականի տարբերակում չկա, գոնե հոգի կիրառությանը, ուստի և միանգամայն կանոնական է այդ նախադասությունը: Քանի որ մեր փորձի առարկան արևելահայերենն է, հետևաբար, ընդհանուր թվից պետք է հանել այդ մեկ նախադասությունը, որպես ոչ կանոնական կառուցվածք մեր լեզվի համար: Մյուս երկու նախադասությունների մեջ օրվան ձևն է գործածվել իբրև սեռական (այսօրվան օրը, օրվան մի օր): սեռականի այս ձևը գործածվել է մեր դասական գրականության մեջ, մասնավորապես Հ. Թումանյանի երկերում, այժմ էլ բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում գործածվում է և, վերջապես, այդ երկու կապակցություններն էլ ժողովրդական լեզվից մուտք են գործել մեր գրական լեզվի մեջ

և այժմ էլ պորժավում են իբրև դարձվածաբանական կապակցություններ: Հանկուզ այս երկուսը, կստանանք 607. ուրեմն 607 նախադասության մեջ պորժավ ձևը գործածվել է որպես տրական, ինչպես և պետք էր սպասել: Անորոշի ձևի 610 նախադասություններից 15-ը սխալ է (տրված ձևը փոխարինվել է ուղղականի կամ բացառականի ձևով), ուստի և դրանք հաշվից պարտ ենք պցում: Մնացյալ 595 նախադասություններից 13-ի մեջ սեռականի ձևը գործածվել է որևէ կապի հետ (համար-5, հետ-3, մեջ-1, վրա-1, պես-1, մոտ-1, առանց-1): Քանի որ կապերի գործածությունը թույլ դիրք ենք համարում, ապա այս 13-ն էլ ենք դուրս գցում, թեև կարող էինք հատկացնել սեռականին՝ իբրև գերհոլոված: Այսպիսով, մնում է 582 նախադասություն, որոնցից 565-ի մեջ առաջին սյունակի ձևերը գործածվել են իբրև հատկացում, 17-ի մեջ՝ բայական լրացման դերով (մեծ մասամբ որպես հանգման խնդիր, բայց նաև որպես ուղիղ խնդիր):

Նույն փորձը կատարել ենք նաև հայկական բաժնի 2-րդ կուրսում: Հայոց լեզվի գործնական պարապմունքների ժամին: Դասախոսների թույլտվությամբ, մենք երեք խումբը հավաքել ենք մեկ լսարան և դասախոսների ներկայությամբ գրատախտակին դրել հետևյալ բառերը՝ դարձյալ երկու սյունակով.

Աշակերտի	Աշակերտին
Բարեկամի	Բարեկամին
Ծառի	Ծառին
Ամսվա	Ամսվան
Շահենի	Շահենին
Ընկերոջ	Ընկերոջը
Կատվի	Կատվին
Հսարանի	Հսարանին
Ուրախության	Ուրախությանը
Այգու	Այգուն

Դասախոսներին նախապես չէինք ասել փորձի նպատակը, բայց ցուցակից և հանձնարարության մեր բացատրությունից նրանք այդ կռահեցին. ուսանողները, ինչպես նախորդ փորձի ժամանակ, չգիտեին դրա նպատակը: Այս փորձի տվյալները հետևյալն են. աշխատանքը կատարել է 35 հոգի: Մեկը, ինչպես երևում է նախադասությունների կառուցվածքից, արևմտահայ է, ուստի և ամբողջ թվից հանում ենք: Մնացած 34 հոգին կազմել են 340 նախադասություն անորոշի, 340-ը՝ որոշյալի ձևով: Ինչպես նախորդ փորձի ժամանակ, այստեղ էլ որոշյալի ձևով կազմված նախադասությունների մեջ հիշյալ բառաձևերը գործածվել են բայական լրացման դերով, այսինքն՝ տրական հոլովի դերով: Անորոշի ձևով կազմված 340-ից 7-ը սխալ է (սեռականը փոխարինված է ուղղականով), իսկ 15-ը՝ կապի հետ է գործածվել (մեջ-6, մոտ-5, վրա-3, տակ-1). այս երկուսն էլ, ինչպես նախորդում, հանում ենք ընդհանուր թվից (340—7—15=318): Մնացյալ 318-ից 2 նախադասության մեջ անորոշը գործածվել է իբրև տրական («Հանդիպեցի մի անծանոթ ընկերոջ», «Նա մի ընկերոջ կնիքի»), իսկ 316-ում՝ իբրև սեռական (հատկացումի դերով): Միացնելով երկու փորձերի տվյալները՝ ստանում ենք հետևյալ պատկերը.

¹ Հիշենք նաև, որ սեռականի վերջավորությունը նախապես —վան էր, և ն-ի վերածումը հոգի՝ համեմատաբար նոր երևույթ է:

1. Փորձին մասնակցել են 96 հոգի, որից մեկը հանում ենք (արևմտահայերեն գրելու պատճառով), ուրեմն մնում է 95 հոգի:

2. Մասնակցողները կազմել են 950 նախադասություն յուրաքանչյուր սյունակի բառաձևերով:

3. Տրականի ձևը 947-ի մեջ գործածվել է իբրև տրական, 2-ը՝ որպես սեռական (դարձվածաբանական բնույթ ունեցող կապակցություններում՝ այսօրվան օրը, օրվան մի օր), մեկը արևմտահայերենին հատուկ կառուցվածքով:

4. Անորոշի ձևի համար կազմված նախադասություններից 22-ը սխալ է, որ հաշվից հանում ենք, ուստի և գերհոլովաձևով (սեռականի ձևով) կազմված նախադասությունների թիվն է 928. սրանցից էլ 28-ի մեջ սեռականը գործածվել է որևէ կապի հետ, ուստի և մնում է 900:

5. 900 նախադասություններից 881-ի մեջ անորոշի ձևը գործածվել է որպես սեռական, և միայն 19-ի մեջ՝ իբրև տրական (միայն 2,16 տոկոս, 97,84 տոկոսի դիմաց):

Այսպիսով, փորձը հաստատում է մեր ենթադրությունը. անորոշ ձևը թելադրում է սեռական հոլովին հատուկ կառուցվածք, իսկ սա նշանակում է, թե սեռական և տրական հոլովները խոսողների գիտակցության մեջ (սուբյեկտիվ համակարգում) տարբերակված են: Իբրև գերհոլովաձև անորոշի ձևը գիտակցվում է որպես սեռական հոլով և թելադրում է այդ ձևի գործածությունը սեռականի գերով (որպես հատկացուցիչ): Ընդհակառակն, որոշյալի ձևը (աշակերտին, բարեկամին և այլն) գործածվում է բացառապես տրականի դերով, ըստ որում հոգավոր ձևը մեր գրական լեզվի արդի կանոնական մակարդակում միայն տրական է: Ինչպես ասացինք, անորոշի ձևը 19 նախադասության մեջ գործածվել է տրական դերով: Որպեսզի նշված գործածությունների մասին դատողություն անել հնարավոր լինի, բերում ենք այդ 19 նախադասությունները:

1. Տեսա մի աշակերտի:
2. Մոտեցա մի գեղեցիկ այգու:
3. Ուսուցիչը երկու աշակերտի դուրս հանեց դասարանից:
4. Տեսա մի կառավի:
5. Մոտեցավ մի ֆաղափի:
6. Փողոցում հանդիպեցի մի աշակերտի:
7. Նկատեցի կանգնած աշակերտի:
8. Մոտեցանք մի աննշան ֆաղափի:
9. Նա մոտեցավ մի աշակերտի:
10. Մի աշակերտի ուսուցիչը պատժեց:
11. Փողոցում պատահմամբ հանդիպեցի ինձ անծանոթ մի աշակերտի:
12. Մոտեցա մի ծառի:
13. Դասից հանեցին մի աշակերտի:
14. Հանդիպեցի մի աշակերտի:
15. Տեսա մի աշակերտի:
16. Մոտեցա մի ֆաղափի:
17. Տեսա մի աշակերտի:
18. Հանդիպեցի մի անծանոթ ընկերոջ:
19. Նա մի ընկերոջ կնվիրի:

Այս նախադասություններից 17-ում անորոշի ձևը գործածվել է մի-ի հետ (ունենալով կամ չունենալով ուրիշ որոշիչ). մեկում՝ երկու թվականի հետ, մեկում՝ կանգնած որոշի հետ (նկատեցի կանգնած աշակերտի): Ինչ-սլես տեսնում ենք, այս նախադասությունը այնքան էլ սովորական չէ. ավելի ճիշտը և սովորականն է՝ նկատեցի մի կանգնած աշակերտի: Բայց դա մի կողմ թողնենք. այն փաստը, որ 17-ում անորոշի ձևը գործածվել է մի-ի հետ, շատ րան է ասում: Սեռականի ձևը (առանց հոգի) որպես տրական գործած-վելիս անհրաժեշտորեն սյահանջում է մի անորոշը, որն է անորոշ կամ ցուցա-կան (նաև՝ որոշյալ) դերանուն կամ որևէ այլ կարգի լրացում (օրինակ՝ թվա-կան), Հենց այս էլ ստեղծում է ուժեղ դիրք և տարբերակում գերհոլովաձևը որպես տրական: Առանց որևէ լրացման գերհոլովաձևը տրականի դերում չործածվելիս զրկվում է առարկայական վերաբերությունից և հանդես գա-լիս անվանողական կամ հատկանշային դերով (հմմտ. մարդու հանդիպեցի, աշակերտի մոտեցա և այլն): Այս տեսակետից ուշագրավ է հետևյալը. երեք դասախոսներն էլ, որոնց խմբերում կատարեցինք աշխատանքը, հինգ հոլո-լի տեսության կողմնակիցներ են. նրանցից մեկը նույնպես մասնակցեց փորձին և դրեց նախադասություններ, բնականաբար բոլոր անորոշները տրականի գերով գործածելու մտադրությամբ: Բերում ենք այդ նախադասու-թյունները.

Մոտեցա մի աշակերտի:
Հիշեցի մի հին բարեկամի:
Հասնում էինք մի մեծ ծառի:
Խոսեց այգու մասին:
Հասանք նոր ամսվա:
Ոչ մի Շահենի չեմ ճանաչում:
Տեսանք մի ընկերոջ:
Նկատեցի մի կատվի:
Հասանք մի մեծ լսարանի:
Քո ուրախության ուրախություն չի հասնի:

Այս նախադասություններից էլ 6-ում տրված բառերը գործածվել են մի-ի հետ, մեկում՝ ոչ մի-ի, մեկում՝ նոր-ի, մեկում՝ մասին կապի հետ: Այս վերջինը մի կողմ թողնելով (իբրև չեզոքացման դիրք), 8-ում տրված բառերի անորոշ ձևի գործածությունը ճիշտ ու ճիշտ համապատասխանում է գերհո-լովաձևի արականի դերում հանդես դալու համար մեր նշած պայմանին: Մի-միայն վերջին նախադասության մեջ (Քո ուրախության ուրախություն չի հասնի) այդ պայմանը չի պահպանվել: Սակայն այստեղ գործ ունենք այլ երևույթի հետ. եթե ուրախության բառի փոխարեն տրված լինեք, ասենք, բերկրանքի բառը, պարզ է, որ այլևս նա չէր կարող դրել Քո բերկրանքի բերկրանք չի հասնի: Գիտենք, որ որոշ կարգի բառեր տրականում էլ հոգ կարող են չստանալ (Հանդիպեցի քո աղջկանը, բայց և ավելի սովորական՝ հանդիպեցի քո աղջկան: Ձեր տան դռանը մոտեցանք և՛ Ձեր տան դռան մոտեցանք և այլն): Արդ, -ուրջուն ածանցով կազմված բառերով տրականը ոչ հեռավոր անցյալում հոգ չէր տեսնում: Մ. Աբեղյանը հոգավոր ձևը համա-րում է անհանձնարարելի, իսկ Հ. Աճառյանը՝ ուղղակի սխալ: Վերջին մի քանի տասնամյակներում է, որ -ուրջուն-ով կազմված բառերի տրականի

հողավոր գործածությունը ընդհանրացել է և կանոնական դարձել: Բայց ինչպես ամեն մի նոր ընդհանրացած լեզվական երևույթի հետ որոշ ժամանակ դեռևս սովորական է լինում նաև հնացած, դուրս մղվող երևույթի գործածությունը, այդպես էլ, այս դեպքում է. —**ԾԱՔՅԱՆՈՎ** բառերի տրականի անհոդ ձևը, որոշյալ լինելու դեպքում էլ, դեռևս գործածվում է, թեև մեզ համար, օրինակ, բերված նախադասությունը խորթ է (ավելի հարազատ է՝ **Քո ուրախությունը ուրախություն չի հասնի**):

Եվ այսպես, մեր այս փորձը, ինչպես մենք համոզված ենք, հաստատում է, որ խոսողների գիտակցության մեջ, նրանց լեզվական համակարգում որոշակիորեն տարբերակված կերպով գոյություն ունեն սեռական և տրական հոլովները: Ելնելով այն փաստից, որ դեպքերի ճշող մեծամասնության մեջ անորոշի ձևը տրականի գերով գործածելու համար նրա հետ գործածվում է մի անորոշը, մենք գտնում ենք, որ մեր լեզվական ներունակության համակարգում տրականը գոյություն ունի մի... (մի սեղանի, մի մարդու, մի աշակերտի և այլն) և..... և (աշակերտին, սեղանին, մարդուն և այլն) մոդելներով. գործածության մեջ, կոնկրետ խոսքի մեջ, այդ մի-ն կարող է փոխարինվել ուրիշ անորոշ լրացումներով (որևէ սեղանի, ինչ-որ սեղանի, ամեն սեղանի և այլն), թվականներով (երկու սեղանի, հինգ աշակերտի, մեկ մարդու և այլն) և այլ կարգի բառերով կամ էլ բոլորովին հանվել, եթե գործածվում է հատկանշային իմաստով:

Ուսանողների կազմած նախադասությունների մեջ, սակայն, մեր ուշադրությունը գրավեցին մի քանի այլ հանգամանքներ, որոնցից մեկը, թեև մեզ զբաղեցնող հարցի հետ անմիջականորեն չի կապվում, բայց ինքնին հետաքրքրական է: Դա բառերի կապակցելիության հարցն է: Ուսումնասիրելով բոլոր 1900 նախադասությունները, մեզ համար պարզ դարձավ հետևյալը. տրված բառերից մի քանիսով (կատվի-կատվին, բարեկամի-բարեկամին, ծառի-ծառին և այլն) կազմված նախադասությունները մեծ բազմազանություն են ներկայացնում. մինչդեռ մի քանի բառերով կազմվածները՝ խիստ միօրինակություն: Այդ բառերն են. **ՈՒՐԱԽՈՒՅՅԱՆ-ՈՒՐԱԽՈՒՅՅԱՆԸ**, ամսվա-ամսվանը, օրվա-օրվանը: Բացատրել այդ հանգամանքը բառերի սահմանափակ կապակցելիությամբ, ճիշտ չի լինի, որովհետև այդ երեք բառերն էլ, ընդհանրապես, շատ հարուստ կապակցություններ ունեն: Մենք այդ վերադրում ենք հիշյալ բառերի սեռականի ու տրականի ձևերի կապակցելիության սահմանափակությանը: Հիշելով, ամսվա և ամսվան ձևերը շատ քիչ կապակցություններում են հանդես դալիս (չհաշվելով կապական խնդրի գործածությունը), ամսվան ձևի համար, օրինակ, սովորական կարելի է համարել՝ հասնել, մտնել, մոտենալ, սպասել, հանգել և նման մի քանի բայերի կապակցությունները. **ՈՒՐԱԽՈՒՅՅԱՆԸ** ձևի հետ գրավոր աշխատանքների մեջ մեծ մասամբ գործածվել են՝ մասնակից լինել, սպասել, չափ կամ չափ ու սահման չկառ բառերն ու բառակապակցությունները: Մյուս կողմից, սակայն, այդ բառերի ուղղական հոլովը, ինչպես և բացառականը, շատ հարուստ են կապակցելիությամբ: Ստացվում է այնպես, որ բառերի կապակցելիության մասին ամբողջական գաղափար կազմելու համար պետք է հաշվի առնել ոչ միայն ուղղականի կապակցելիությունը, այլև՝ յուրաքանչյուր հոլովին: Թվում է, թե հոլովաձևերի կապակցելիության և գործածության հա-

Հայտնականության պարզաբանումը կարող է ուշագրավ եզրակացությունների հիմք հանդիսանալ:

Վերցնալիս, պետք է նշենք նաև, որ տրականի ձևերով կազմված նախադասություններից մի զգալի մասի մեջ տրականը գործածվել է ուղիղ խնդրի պաշտոնով: Սա, իհարկե, ինչ-որ բան կարող է ասել ուղղական և հայցական հոլովների մասին, բայց այստեղ չենք շոշափի այդ հարցը, որովհետև դրանց անդրադառնում ենք մեր մի ուրիշ փորձի արդյունքներին նվիրված հաղորդման մեջ:

РЕЗУЛЬТАТЫ ОДНОГО ПСИХОЛИНГВИСТИЧЕСКОГО ОПЫТА

Э. Б. АГАЯН

член-корр. АН Арм. ССР

Р е з ю м е

Теоретической основой опыта является принцип о порождающей модели в сознании говорящих. Известно, что эти модели позволяют порождать (составлять) предложения на основе какой-либо словоформы, являющейся организующим звеном целого предложения. Например, если дается подопытному словоформа уч и т е л е м, то он составит предложение с такой конструкцией, в которой более часто выступает существительное в творительном падеже.

Наша цель—выяснить: дифференцированы ли в сознании говорящих родительный и дательный падежи современного армянского языка. Согласно нашей точке зрения, в современном литературном армянском языке (восточном варианте) формы родительного и дательного падежей являются омонимами. Эта омонимия устраняется или «определятельным» постпозитивным артиклем, или позицией существительного в предложении. Но в некоторых конструкциях (например, в предложных) омонимия остается. В таких позициях мы имеем нейтрализацию двух падежей. В позиции нейтрализации выступает а р х и п а д е ж родительного-дательного. Так как в функции архипадежа выступает слабая, омонимичная форма (без определятельного артикля), то мы считаем, что в функции архипадежа выступает форма родительного падежа (немаркированная форма). Из этого следует, что немаркированная форма является собственно формой родительного падежа, а дательный падеж образуется из этой формы посредством прибавления определятельного артикля или неопределенного местоимения. Такая характеристика диктует нам, что в случае, если мы дадим подопытному слово в форме родительного-дательного падежа без артикля и без неопределенного местоимения, то в предложении эта форма будет употреблена в функции собственно родительного или в предложных конструкциях. Для доказательства этого мы составили список десяти существительных в форме родительного и дательного (с артиклем). Написав эти словоформы на доске, мы предложили студентам написать по одному предложению для

каждой словоформы. Результаты следующие: 95 студентами написаны по 950 предложений. В 947 предложениях форма дательного употреблена в функции дополнения (косвенного и прямого). В 881 предложении (из 950) неопределенная форма употреблена в функции несогласуемого определения, в 28—в предложных конструкциях, в 22—форма родительного заменена именительным, и лишь в 19—в функции дополнения с прибавлением местоименного артикля *ur*.

Таким образом, доказывается, что неопределенная (архипадежная, немаркированная) форма оценивается, осознается говорящим как родительный, что и диктует соответствующую конструкцию—существительный с существительным—с выражением грамматического значения посесивности.